ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Որոշում
16 հուլիսի 2020 թվականի N 165-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ ՎՃԱՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՏԱՐԵԿԱՆ ՇԱՀՈՒԹԱԲԱԺԻՆՆԵՐԻ ՉԱՓԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 49-րդ և 68-րդ հոդվածներով, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2011թ. մարտի 3-ի «Պետության սեփականություն հանդիսացող բաժնեմաս ունեցող առևտրային կազմակերպությունների շահույթի բաշխման, շահութաբաժինների հաշվարկման և Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի դեկտեմբերի 5-ի N1194 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N202-Ն որոշմամբ հաստատված կարգը,

որոշում եմ.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարանի համակարգի առողջապահական փակ բաժնետիրական ընկերությունների կողմից 2019 թվականի ֆինանսատնտեսական գործունեության արդյունքներով Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջե վճարման ենթակա տարեկան շահութաբաժինների չափը՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնարարել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարանի համակարգի առողջապահական փակ բաժնետիրական ընկերությունների տնօրեններին՝ մինչև 2020 թվականի հոկտեմբերի 1-ը սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարել շահութաբաժնի առկա պարտավորությունը:

16.07.2020

ՀՐԱՉՅԱ ՊՈՂՈՍՅԱՆ

Подписано: POGHOSYAN HRACHYA 4005640117

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ **Հ. ՊՈՂՈՍՅԱՆ**

Հավելված
ՀՀ Սյունիքի մարզպետի
2020թ. հուլիսի 16-ի N65Ա որոշման

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարանի համակարգի առողջապահական փակ բաժնետիրական ընկերությունների 2019 թվականի ֆինանսատնտեսական գործունեության արդյունքներով Հայաստան Հանրապետության 2020 թվականի պետական բյուջե վճարման ենթակա շահութաբաժինների գումարի չափը

Հ/Հ	Կազմակերպության անվանումը	ՀՀ 2020թ. պետական բյուջե վճարման ենթակա շահութաբաժնի գումարն՝ ըստ կանոնադրական կապիտալում պետության բաժնեմասի (ՀՀ դրամ)
1	«Կապանի բժշկական կենտրոն» ՓԲԸ	4684000
2	«Գորիսի բժշկական կենտրոն» ՓԲԸ	520700
3	«Սիսիանի բժշկական կենտրոն» ՓԲԸ	415800
4	«Մեղրու տարածաշրջանային բժշկական կենտրոն» ՓԲԸ	98000
5	«Քաջարանի բժշկական կենտրոն» ՓԲԸ	851900
6	«Սյունիքի մարզային նյարդահոգեբուժական դիսպանսեր» ՓԲԸ	336000
7	«Սյունիքի մարզային արյան փոխներարկման կայան» ՓԲԸ	99000

7/16/2020

X

ԷԴԳԱՐ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Подписано MARTIROSYAN EDGAR 4003840615

ՀՀ Սյունիքի մարզպետարանի
գլխավոր քարտուղար՝ **Է. Մարտիրոսյան**